ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

Կազմակերպված հանցավորության դեմ ուղղված ուսուցման և գործառնական գործընկերության ծրագիր II (TOPCOP II)

Իրականացման ժամանակահատված: 01.07.2024 - 30.06.2028

ԱԼԳ երկրներ:

Ադրբեջան, Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 5 200 000

Ընդհանուր բյուջե: € 5 200 000

Իրականացնող կազմակերպություն(ներ):

CEPOL

Սոցիալական ցանցերում օգտահաշիվների հղումներ: facebook.com/CEPOLEU#, https://x.com/eu_cepol, youtube.com/@CEPOL_EU, linkedin.com/company/cepol, https://bsky.app/profile/eu-cepol.bsky.social

Նախագծի կայքէջ: cepol.europa.eu/international-cooperation/topcop

Նախագծի նկարագրություն:

«Կազմակերպված հանցավորության դեմ ուղղված ուսուցման և գործառնական գործընկերություն» (TOPCOP) ծրագրի երկրորդ փուլը շարունակում է աջակցել Արևելյան գործընկերության երկրներին կազմակերպված հանցավորության դեմ պայքարում: Ծրագրի նպատակն է հետագա ամրապնդել գործառնական արդյունավետությունը և համատեղ ջանքերը Արևելյան գործընկերության երկրների և Եվրոպական միության միջև՝ ուժեղացնելով տարածաշրջանային մակարդակով ռազմավարական և գործառնական համագործակցությունը հանցավոր սպառնալիքներին հակազդելու համար:
Հենվելով TOPCOP ծրագրի առաջին փուլի (2020–2024 թթ.) ձեռքբերումների վրա՝ նոր փուլը նպատակ ունի խորացնել տարածաշրջանային համագործակցությունը տեղեկատվության փոխանակման, համատեղ գործողությունների և տարածաշրջանային նախաձեռնությունների մեխանիզմների բարելավման միջոցով: Ծրագիրը միտված է իրավապահ մարմինների ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդմանը՝ ներքին ուսուցման կարողությունների զարգացման, կայուն ուսուցման ծրագրերի մշակման և տեղական դասընթացավարների ու մենթորների ցանցի ձևավորման միջոցով: Ուսուցման փաթեթում առավել մեծ շեշտ է դրվում մասնագիտացված և առաջադեմ թեմաների վրա՝ արձագանքելու տարածաշրջանում զարգացող հանցավոր միջավայրին: Բացի այդ, ծրագրի շրջանակը ընդլայնվել է՝ ներառելով նոր և առաջացող սպառնալիքները, ինչը հնարավորություն է տալիս շահառուներին ժամանակին արձագանքել տեխնոլոգիական զարգացումներին և հանցավոր նորարարություններին:

Ակնկալվող արդյունքներ:

1. Բարելավվել են ռազմավարական և օժանդակ ցանցերը, որոնք նպաստում են միջգերատեսչական համագործակցությանը և գիտելիքների, տեղեկատվության ու լավագույն փորձի փոխանակմանը տարածաշրջանային մակարդակով՝ քրեական հետաքննության և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ոլորտում:
2. Արևելյան գործընկերության տարածաշրջանի իրավապահ մարմինների աշխատակիցների և համապատասխան այլ շահագրգիռ կողմերի գիտելիքներն ու գործառնական կարողությունները բարձրացել են՝ կազմակերպված հանցավորության հիմնական ձևերի դեմ պայքարում:
3. Խորացել է ռազմավարական և վերլուծական երկխոսությունը՝ Արևելյան գործընկերության տարածաշրջանի վրա ազդեցություն ունեցող ծանր և կազմակերպված հանցավորության սպառնալիքների վերաբերյալ: